ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 25 - Ա
24 փետրվարի 2015 թ.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, ,,Քաղաքացիական ծառայության մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2002թ. օգոստոսի 1-ի N 40 որոշմամբ հաստատված ,, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քաղաքացիական ծառայության առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի աշխատակարգի,, 9-րդ կետի պահանջները

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետի (64-3.1-14) թափուր պաշտոն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների մրցույթային հանձնաժողովի կազմը՝ Միքայել Եղիազարյան/Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության գլխավոր մասնագետ/, Կարեն Բարսեղյան /Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմի վերահսկողության և վերլուծության գլխավոր մասնագետ/, Վանիկ Հովհաննիսյան /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ/, Արմեն Զոհրաբյան /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ/, Մանուշ Խունոյան /Գավառի թիվ 1 հիմնակարգ դպրոցի տնօրեն/, Ռուզաննա Քոլոզյան /Գավառի թիվ 5 միջնակարգ դպրոցի փոխտնօրեն/՝ ուսումնական և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2. Մրցույթային հանձնաժողովի նախագահ նշանակել Միքայել Եղիազարյանին, քարտուղար՝ Կարեն Բարսեղյանին:

3. Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի լիազորությունները համարվում են դադարեցված ատեստավորման ավարտից հետո:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ